Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

Առաջնորդ Արագածոտնի թեմի

Ծնվել է 1957 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում: 1976 թ. ավարտել է տեղի թիվ 32 միջնակարգ դպրոցը:

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1984 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. պաշտպանել է ավարտական՝ «Բանք ընդդիմադրականք ի քակտումն հերձուածոց Ցակոբիկ Ասորւոց» թեմայով:

1985-86 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1987-89 թթ. աշխատել է որպես Մայր տաճարի եկեղեցական արվեստի բաժնի վարիչ:

1987 թ. հունիսի 7-ին Մայր տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1987-89 թթ. եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիրը:

1989 թ. սեպտեմբերի 7-ից նշանակվել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վանահայր:

1989 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Գր. Տաթևացու քրիստոսաբանական հայացքները» թեմայով, և նոյեմբերի 6-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Անանիա եպս. Արաբաջյանի, ստացել վարդապետական առաջին չորս աստիճանները:

1990 թ. հիմնադիր նախագահն է «Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցասիրաց բարեգործական միության»:

1991 թ. Օշականի, 1995՝ Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի Պատվո քաղաքացի:

1996 թ. հունիսի 3-ից՝ Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդ:

1997 թ. Ֆրանսիական (20) քաղաքների Հայաստանի հետ «Բարեկամություն» միության (2) համանախագահներից մեկն է:

ՕՁՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ